

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N1

Ռումանագերմանական բանասիրության ֆակուլտետի գիտխորհրդի

19.09.2014թ. նիստի

ՕՐԱԿԱՐԳ

1. Անվանական կրթաթոշակի ներկայացվող ուսանողների թեկնածություններին հաստատում:
2. Ֆակուլտետի խորհրդի 2014-2015 ուս. տարվա աշխատանքային պլանի հաստատում:
3. Ընթացիկ գիտության կենտրոնի և բայրոնագիտության կաբինետի կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն:
4. Ընթացիկ հարցեր:

Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 36 անդամներից 22-ը:

1. ԼՍԵՑԻՆ՝

Ֆակուլտետի դեկան և գիտխորհրդի նախագահ Ս.Աբրահամյանը նիստը բացեց ամբողջ գիտխորհրդի կողմից շնորհավորելով բ.գ.դ. Շուշանիկ Պարոնյանին՝ պրոֆեսորի կոչում ստանալու կապակցությամբ, ապա առաջարկեց ներկայացնել անվանական կրթաթոշակի հավակնող ուսանողներին:

ԱՐՏԱՏԱՅՏՎԵՑԻՆ՝

Ռումանական բանասիրության ամբիոնի վարիչ Հ.Բաղդասարյանը, Գերմանական բանասիրության ամբիոնի վարիչ Յու. Գաբրիելյանը, Ֆրանսիական բանասիրության ամբիոնի վարիչ Զ.Հարությունյանը առաջարկեցին իրենց թեկնածությունները՝ ներկայացնելով համապատասխան ուսանողների տվյալներն ու ձեռքբերումները:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հաստատել անվանական կրթաթոշակի ներկայացվող հետևյալ ուսանողների թեկնածությունները. Ֆրանց Վերֆել՝ Միլիթարյան Սոնա /իսպ. բաժին, 1-ին կիսամյակ/, Ղազարյան Մարիամ /իսպ. բաժին, 2-րդ կիսամյակ/, Հրայր Աճառյան՝ Մարտիրոսյան Մարիամ գերմ. բաժին/, Վ.Սարոյան՝ Մանուկյան Ռոզա /ֆր. բաժին, մագիստ., 1-ին կիսամյակ/, Անահիտ Աղաքարյան /2-րդ կիսամյակ, անգլ. բաժին/:

2. ԼՍԵՑԻՆ՝

Ֆակուլտետի գիտխորհրդի 2014-2015 ուս. տարվա աշխատանքային պլանը ներկայացվեց գիտխորհրդի անդամներին, որի քննարկումից հետո այն դրվեց բաց քվեարկության:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Միաձայն քվեարկության արդյունքում հաստատվեց Ռումանագերմանական բանասիրության ֆակուլտետի գիտխորհրդի 2014-2015 ուս. տարվա աշխատանքային պլանը:

3. ԼՍԵՑԻՆ՝

Բ.գ.դ, պրոֆ. Սոնա Սեֆերյանը ներկայացրեց 2013-2014 ուս. տարում Ընթացիկ գիտության կենտրոնի և Բայրոնագիտության կաբինետի կատարած աշխատանքների հաշվետվությունը: Նա մասնավորապես կարևորեց թարգմանական մրցույթը, արտասահմանյան բայրոնագիտության տարեկան գիտաժողովներին իր և

Ս.Աբրահամյանի մասնակցությունը՝ սկսած 2009թ.-ից, Շեքսպիրի և Բայրոնի աշխատանքների թարգմանությունների տպագրությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Շեքսպիրագիտության կենտրոնի և բայրոնագիտության կաբինետի կատարած աշխատանքները գնահատել լավ:

4. ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

ՈՐՈՇԵՑԻՆ՝

- Թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի 2013-2014 ուս տարվա շրջանավարտ Տաթևիկ Նաջարյանին երաշխավորել ԵՊՀ ասպիրանտուրա ընդունվելու համար:

Գիտլսորհրդի նախագահ՝

Գիտլսորհրդի քարտուղար՝

19 սեպտեմբերի 2014թ.

Ս.Ա. Աբրահամյան

Գ.Տ. Մուրադյան